

Հանդարտութիւն չդտնելով եւ նպատակին չհասնելով դարձեալ Լիվոնոյ գնաց եւ հոն վախճանեցաւ 1776ին (ուղիղ՝ 1773ին)։ Սարգիս Վ.ին խօսակցութիւնը շատ ընտիր էր, եւ Հայոց մէջ անուանի քարոզիչ էր. քանի մ'աշակերտ ունեցաւ, եւ անոնց ինք սովեցուց ուղղափառութիւնը։ Ասոնցմէ մէկն է հեղահոգի Յովհաննէս Եպիսկոպոս. որ նաեւ Գաղատիյա եկած է։

Այստեղ յիշուած Աւգերեանին եւ Մեծ Մովսէս Վ.ին վրայ աւելորդ չէ քանի մը տեղեկութիւն տալ։

Ա-գէրեան (Ավքերեան, Աւքերեան, Աֆկերեան, Արկարեան) Ստեփան Վ. Գաղատացի, աշակերտ Ուրբանեան Դպրանոցին, 1794 Սեպտեմբ. 17ին Կ.Պոլսոյ Առաքելական փոխանորդ Սոֆեալեան Սահակ Վ.ին օգնական անուանեցաւ ի Հռոմայ՝ իրաւամբ յաջորդութեան։ 18 Սեպտ. 1797ին Կ.Պոլսոյ մէջ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ «Կղզիդիոյպոլսոյ» տիտղոսով, ի Յովհ. Վ. Աղարեան Արհեպիսկոպոսէն Համթայ, որ Սարգիս Արքեպիսկոպոսին աշակերտն էր, (որուն վրայ քիչ մը վարը) 1804ին յաջորդեց Սոֆեալեանի, 1806ին ստիպուեցաւ հրաժարիլ, 1820ին Պօղոս Պատրիարքին միութեան նպատակաւ գումարած ժողովքին մէջ գտնուեցաւ Մխիթարեան Հարց հետ, եւ 1821 Սեպտ.ին վախճանեցաւ։ Հրատարակած է՝ 1. Գրքուկ որ կոչի Սկզբունք բնական գիտութեանց, Հռոմ, 1796։ 2. Տօքուղ կիւն մտածական տուա երանելի Կղեմէս Հայ-